**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԿԴՄՀՀ-ԳՀԾՁԲ-22/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

29.12.2021թ.

ք. Երևան

22.12.2021-29.12.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայություններ) ձեռքբերման ԿԴՄՀՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լուսինե Բոյաջյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ, |
| Բագրատ Հարությունյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի իրավաբան, |
| Արա Ղազարյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Բոյաջյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի դեկտեմբերի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում ժամը 12:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդային ծառայություններ) | 28000000 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Պահապան1» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00925301, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակ, 16/2, հեռ. 010625911, էլ. հասցե՝ pahapan119@mail.ru |
| 2 | «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00215203, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան փ. 22ա, Արաբկիր 0051, հեռ.՝ +374434399, էլ. հասցե՝ info@alphaforce.am |
| 3 | «Պանտերա Սիքյուրիթի» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02584071, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2-րդ փակ., 1 տուն, 2 բն., հեռ.՝ 093485577, էլ. հասցե՝ office@pantera.am |
| 4 | «Քինգ Մարշալ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00191157, հասցե՝ ՀՀ, ք. Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 15/5, 15/3, հեռ.՝ 098470040, 81-22, 011-81-22-00 էլ. հասցե՝ info@kingmarshal.am |
| 5 | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00484087, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սարի Թաղ 5 շարք 5, հեռ.՝ 099555587, էլ. հասցե՝ 0099555587@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի

հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան և բացեց հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակցի.

1. «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի» բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.2-ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդային ծառայություններ) | «Պահապան1» ՍՊԸ | 28,000,000.00 | 27,000,000.00 | 5,400,000.00 | 32,400,000.00 |
| | | «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ | 28,000,000.00 | 30,840,000.00 | - | 30,840,000.00 |
| | | «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ | 28,000,000.00 | 25,000,000.00 | 5,000,000.00 | 30,000,000.00 |
| | | «Քինգ Մարշալ» ՍՊԸ | 28,000,000.00 | 27,500,000.00 | 5,500,000.00 | 33,000,000.00 |
| | | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | 28,000,000.00 | 23,333,333.00 | 4,666,667.00 | 28,000,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. 23.12.2021թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. սահմանված ժամկետներում «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Պահապան1» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և | բավարար |

| | | |
|---|---|---|
| | թիկնապահական ծառայություն ՍՊԸ | |
| 1 | «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Քինգ Մարշալ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | բավարար |

4. 27.12.2021թ. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 29.12.2021թ. ժամը 12:30-ն, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էին բավարար գնահատված բոլոր մասնակիցները:

2. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
| 1 | «Պահապան1» ՍՊԸ | 17,350,000.00 | 3,470,000.00 | 20,820,000.00 |
| | «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ | 22,390,000.00 | 4,478,000.00 | 26,868,000.00 |
| | «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ | 23,100,000.00 | 4,620,000.00 | 27,720,000.00 |
| | «Քինգ Մարշալ» ՍՊԸ | 17,340,000.00 | 3,468,000.00 | 20,808,000.00 |
| | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | - | - | - |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «Պահապան1» ՍՊԸ | | 17,350,000.00 |
| | 3 | «ԱԼՖԱ ՖՈՐՍ» Պահնորդական և թիկնապահական ծառայություն ՍՊԸ | | 22,390,000.00 |
| | 4 | «Պանտեռա Սեքյուրիթի» ՍՊԸ | | 23,100,000.00 |
| | 1 | «Քինգ Մարշալ» ՍՊԸ | X | 17,340,000.00 |
| | 5 | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | | 23,333,333.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվանից 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Բոյաջյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Բ. Հարությունյան

Ա. Ղազարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Եսայան